


ԱԶԱՏ - ՎՇՏՈՒՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂ Է
ԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

891.99

Կ-75



891.99

2-75

ԱԶԱՏ-ՎՅՏՈՒՆԻՔ

Երկրորդ կարգի քաղաքացիական
արդյունաբերության նախարարության
հրաման է հրատարակվում

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.



1009 4036
39255

3424



Թ Ի Յ Լ Ի Ս
Հանրապետության Բաղաճն. Միութ.
1918

1.2 .08 . 2013

57641

12 MAR 2011

ԳՈՐԱՏ ՄԱՂԵԴԻՆԵՐ

Նս կը սիրեմ երեկոներ նուրբ և հեզ,
 դալկութիւնը երկնքի հարթ ոլորտին,
 երբ որ կիջնէ մութն օրօրուն ու բեհեզ,
 երբ գաղտնաշունչ լուութիւն է բոլորդին:

Նս կը սիրեմ ծաղիկները մութ աշնան,—
 կոյս ծաղիկներ՝ նման մեռնող մի կոյսի
 որոնք լուիկ երազեցին ու թոշնան,
 կեանքի ժխոր-խնձոյքներէն մեկուսի:

Նս կը սիրեմ աչեր թախծոտ, օրօրուն,
 ամպերու պէս երազամեղմ ու թեթև,
 որ կ'աւաղեն յուշերը հին օրերուն՝
 որոնց պատեց ճնշող մահւան մութէ թև:

Ես կը սիրեմ թախիժ անբառ և անձև,
տերևաթափ, մարտոզ, գունատ բնութիւն.
արցունքի պէս աշնանային մեղմ անձրև.
Ես կը սիրեմ, ես կը սիրեմ մենութիւն...

Ես կը սիրեմ աղջիկ մը հեզ ու քնքուշ,
որ խոցւած էր, որ խոցւած էր չար մարդէն...
մի հարցնէք թէ ո՞վ է նա, ժ, զգո՞ւշ,
զի նա չկա՛մ, զի նա մեռա՛ծ է արդէն...



Դաշլիճի մէջ կը դառնար խօլ շրջապար.
կը կայթէին գեղունիներ դարձ ու ցիր.
սևեր հագած ինձ մօտեցար լրջաբար,
և մեկանուշ թոթովանքով հարցուցիր.

— Տես, այս մէկը խարտեաշ մազերն ուսերուն,
միւսները՝ կանաչ, կարմիր և նագող.
ամէնքի մէջ ո՞րն է քնքուշն ու սիրուն,
ըսէ խնդրեմ, դու բանաստեղծ երագող:

Նրբին ձայնէդ ես հիացքոտ ու մոզւած,
աչքըս առի գոյգ աչերուդ դեգերող,
շնչեցին շրթունքներըս մորմոքւած.
— Սևեր հագած գունատ աղջիկն է գերող...

Դանլիճի մէջ գեղունիներ վարդէ, վէս,
 իսկ ես ու դու՝ տառապանքով վառ նորէն...
 մութ անկիւն մը տարար բռնած վար թևէս,
 ուր մենք իրար ձուլեցանք լճու, դառնօրէն:
 Դանլիճին մէջ մինչ կը դառնար շրջապար...



Լուսաբացին՝
 լացին, լացին
 վարդերը՝ սև թերթեր բացին...

Լուսաբացին՝
 կոյս, լուսածին
 հաւքերն անխօս թռան, գացին...

Լուսաբացին՝
 ես տուն դարցին,
 խամբած գտա իմ սիրածին...

Լուսաբացին՝
 շող ու թացին,
 սրտիս համար շերիմ բացին...



Վարդերը այսօր՝ դալսւի, անսւշ.
 Կը բուրեն անուշ թախիժ, ձայն-ցաւ...
 անխ, սիվ էր աչոյն այն հեզ, այն նուշ՝
 նայեց վարդերուն, խոցեց, անցաւ:

Լուսնակը այսօր՝ գունատ, անշոյ,
 Մեղմօրէն, յուշիկ հեծեց, լացաւ...
 այն սիվ էր ժպտոյն իր հեզ, մաշող՝
 շոյեց լուսնակին, խոցեց, անցաւ:

Ու սիրտըս այսօր՝ անմեռ, նըւնդ,
 երկնքի ցաւեր բոցեց, բացաւ...
 երազ Աղջիկն էր եկաւ, աւանդ,
 եկաւ, հրդեհեց, խոցեց, անցաւ...



Աչերըդ՝ սև-սև, սաթի նըման,
 երեսըդ՝ ճերմակ, կաթի նըման,
 կը նազես ծովու բազի նման,
 ծաթ ծովէն ծնւած, ծաւի աղջիկ:

Մաղերըդ՝ ջրվէժ, ուսիդ կուտակ.
 շրթերըդ՝ բոսոր, անգին սուտակ.
 սէյ, լեզուդ՝ շաքար, դիւթող թութակ,
 սէզ սարի սուսան, սիրուն աղջիկ:

Քո կուրծքը՝ փրփուր, ովկեան վարար.
 վանխ, խելքըս դլխէս առիր, տարան.
 աչերուս սեցաւ աշխարն արար,
 հէյ, հոգի հանող, հովի աղջիկ:

Հպարտ ես Սասմա սարի նրման.
քո մէջքը դալար, լարի նրման.
ան, միայն սիրտդ է քարի նրման,
քուն,—գիշեր քամող, քարսիրտ աղջիկ:



Ես մի մանիշակ ըլլայի՝
բուսած առակի եզերքին.
ուշքս՝ առակի հեզ երգին,
անփոյթ ժպտէի ու լայի.
Ես մի մանիշակ ըլլայի:

Ես մի մանիշակ ըլլայի,
բոյրս սիրատարփի ճայերուն,
սիրտս կապտաջինջ այերուն՝
մեղմիկ նազէի ու լայի.
Ես մի մանիշակ ըլլայի:

Ես սի մանիշակ ըլլայի՛
բացւած առւի մօտ պուրակին.
բոյրըս հովերուն բուրաղին,
հեզիկ խամբէի ու լայի.
Ես մի մանիշակ ըլլայի:



Սարի ուսին՝
ջինջ լուսին
շողշողաց մեղմ, անուշակ.
ու վար ծաթեց,
արծաթեց
լիճը խաղաղ, մանուշակ:

Լիճը վանա՛
նիրվանա՛
կ'օրօրէ ձիւն կարասին.
մակոյկ մը շիք
ու մշիկ
քուն է մտեր քարափին:

Լճի եզերք՝
մի հեզ երգ
կը թրթրոս բոլորդին.
ահա ասդին՝
հաւաստին
աչքը յառած ոլորտին:

Վարագ և Սար՝
զերթ հետար
սէզ Սիփանին կը հային,
ու կը վիճեն,
կը զիջեն՝
տարած տարփէ կընային...

Գիշեր վանա՝
նիրվանա՝
աստածօրէն դու կերտած.
ամէն մարդու
համար դու
ցնորք, մրմննջ ու քերթած...



1009
39255
4036

Ես նաև մ'եմ նոճէ՛
 ծովու մէջ եռուն.
 հողմն ինձ կը ճօճէ,
 կը տանի հեռուն:

Յոյսն ինձ կը խաբէ,
 իսկ ես՝ խաղալիք.
 իմ շուրջը, բաբէ,
 մահերգող ալիք:

Կը չլեմ վախով,—
 անգիտակ մի չու...
 ո՞վ կըսէ, ա՛խ ո՞վ,
 ո՞ւր կերթամ, ինչո՞ւ:



Գերեզմանիս վրա լինի մի սօսի,
 կէս մը դալուկ, կէս մը լալուկ, երերուն,
 որ թախճանուշ քրոջ մը պէս ինձ խօսի
 հէքեաթսերէն՝ վաղամեռիկ օրերուն:

Վրաս սփռէ թող ծամերը հարթ, ասէ՛
 իր նրբենի ու գազազուն ուսերէն.
 Ղիշեր-ցորեկ թող կամացուկ արտասէ,
 թող պատմէ միշտ տառապանքէն ու սէրէն:

Գերեզմանիս վրա լինի մի սօսի,
 որ մշտերգէ երգերըս մեղմ ու խանձող...
 երբ անցորդի աչքէն արցունք վար հոսի,
 կը հովանա սիրտըս խամրած և անցօղ...



Լինէիր դու մի ծառ
 կանաչ, հովերեր.
 Իսկ ես ալ մի ծիծառ՝
 Թառած քո վերեր:

Ու Թառած քո վերեր՝
 երգէի քո սէր.
 Մօտիկէն՝ հովերեր,
 ջինջ առուն հոսէր:

Ձինջ առուն մեղմ հոսէր,
 ես երգ մնչէի.
 Ինձ տայիր դու քո սէր.
 կրծքիդ ննջէի:

Ձով կրծիդ ննջէի.
 քնիս մէջ տարփած՝
 անունըդ մնչէի,
 մեռնէի հարբած...

Լինէիր դու մի ծառ՝
 կանաչ, հովեր.
 Իսկ ես ալ մի ծիծառ՝
 Թառած քո վերեր:



Լուսնակ գիշերին, այն կարապը հեղ
լճակի վրա նիրհած է անուշ:

լազարթ երկնքէն աստղունքը բեհեզ
կը նայեն գողտրիկ հիացքով անուժ:

լճակը՝ ճերմակ կարապին գրկած,

օրօր ու շօրօր

— օրօր ի՛շ օրօր,

կ'օրօրէ անուշ:

Երազ կը տեսնէ կարապը քնած,

որ լճակի մէջ յուզւած և եռուն՝

մի գունատ աղջիկ եկաւ ու գնաց,

ժպտեց կարապին ու գնաց հեռուն:

լճակը նիրհող կարապին գրկած,

օրօր ու շօրօր,

— օրօր ի՛շ օրօր,

կ'օրօրէ անուշ:


կարապը զարթնեց ու նայեց վերեր,
կանչեց աղջկան դառնագին երգով,
աղջիկը չկար, ցնորք մ'էր երեր
կարապը հեծեց, մեռաւ խոր վերքով:

լճակը՝ մեռած կարապին գրկած,

օրօր ու շօրօր

— օրօր ի՛շ օրօր

կ'օրօրէ անուշ...



Հին յուշեր.
դեկտեմբեր մէկին,
այն գիշեր,
մահաշունչ մէգին,
ես մնջած,
դու գրկիս ննջած...
ձուրտ մէգին՝
դեկտեմբեր մէկին:

Չէս յիշեր.
մայիսի ութին,
այն գիշեր,
նրբաթիւ մութին,
լնւո, դաժան

մենք եղանք բաժան...
նուրբ մութին՝
մայիսի ութին:

Եւ երեք
տարիներ թռան,
քեզ երեկ
տեսա ձեր դռան,
լացինք ցած
մեր օրերն անցած...
ձեր դռան,
ուր՝ օրեր թռան:



Միապաղանդ
 ձիւնը՝ խաղանդ
 ծածկեց նուռին,
 առուն, ուռին:

Միրող մանչեր,
 զանգի զանչեր
 ալ չեն կանչեր:

Ժամն է վերջին,
 ժամն է նինջին
 ամէն ինչին:

Ծառեր մայրի,
 թփեր վայրի՝
 այրի, այրի:

Միրաբա՛՛ ձիւնէն,
 վիշտ-հծծիւնէն
 կուլա՛, կայրի՛:

Միապաղանդ
 ձիւնը՝ խաղաղ
 կուղէ իջաւ
 սրտիս մէջն ալ,
 սրտիս մէջն ալ...



Ամէն գիշեր, երբ որ կիջնէ մութէ թև.
 երբ սենեակըս կը խաւարի, կը սենա,
 ներս կը մտնէ աղջիկ մը մեղմ ու թեթև,
 սենեակիս մէջ միայնակ ենք, ես և նա:

— Եկ՛ւր, կըսէ, եկուր երթանք թևանցուկ
 գերեզմաննոց՝ նոր պսակի, եկ իմ քով.
 շիրիմս այստեղ խաղաղանիստ և անձուկ՝
 նոճենու տակ պառկած հողէ լերկ հիմքով:

Եկուր երթանք, իմ մենասէր սիրական,
 մեռելները տես քեզ որքան կը սիրեն...
 և ես զիւթլած ձայնէն իր ձուրտ, տիրական,
 մանկան մը պէս կը հետևիմ ես իրեն:

Կը քալենք լուռ՝ փողոցներէն համրը, մունջ,
 ձեռքն իր դրած գուրգուրանքով մերկ ուսիս.
 ոչ ոք չկա, ոչ սի շրշուկ կամ մըրմունջ,
 լոկ կը լսւի ոտնաձայներն երկուսիս:

Ահա այստեղ մեռելները հոժ, ցան-ցիր,
 երեկ՝ կային, այսօր՝ քնած, ալ չկան...
 գերեզմաներ, գերեզմանոց գոց, անձիր.
 շիրիմս ահա իմ հարսնացու աղջրկան:

Շիրիմները մթութեան մէջ մերկացան.
 մեռելներն են, որ մեր անցնիլը տեսան,
 ամէնքը մէկ անկարծ ընդոստ վեր կացան,
 ու կը կանչեն. — Եկան մեր նոր հարս — փեսան:

Ու կը տեսնեմ ժօրըս՝ յինած մի քարի,
գլթոտ աչքերն արտաստունքով լի յորդուն.
Ղիբլիմի վրա նստած տխուր, կը կարի
հարսանեաց շոր նոր պսակւող իր որդուն...

Սմեն գիշեր, երբ որ կիջնէ մութէ թև,
երբ սենեակըս կը խաւարի, կը սենա,
ներս կը մտնէ աղջիկ մը մեղմ ու թեթև,
սենեակիս մէջ միայնակ ենք ես և նա:



Ձայն մը բեկ-բեկ, ձայն մը խելառ
կուլա վերաս.
—Մխ, դու անցանք, սխ, դու մեռանք,
մանսկ երագ...

Կը դողդոջեմ, կը դողդոջեմ
լուռ ու մեղմիկ.
ինձ մի նայեր, ես քոնը չեմ,
սարի եղնիկ:

Գիշերն իջաւ՝ սև գիշերըս,
մարեց առտուն.
կը տանեմ երգ ու ճիչերըս
սեռեյատուն...

Լճակը լուրթ՝ կը դողդղա
կը հառաչէ.

—Սէրըդ սեռան, հատնող տղա,
այլ գալու չէ...

Չայն մը բեկ-բեկ, ձայն մը խելառ
կուլա վերաս.

—Ա՛խ, դու անցնի. ա՛խ, դու մեռնի,
մանուկ երագ:



Խարտեաշ մազերով տղա, լճակ աչերով տղա,
Ֆուրտ է. կը հազնս անլերջ. թշւան, կը մեռնիս հազէդ.
տոկուն, համարձակ տղա. ետուն փրղոցի տղա,
ահա կը կանչես ուժգին. —Նոր լուր, հեռագիր, կազէ՛թ:

Բորիկ ոտներով տղա. առոյգ, կիսամերկ տղա,
փողոցէն միշտ կանցնես արագ, մայթը կը թնդն վազէդ.
հպարտ, աշխատող տղա. մրի, զրկանքի տղա,
վազիր, համարձակ գոռա. —Նոր լուր, հեռագիր, կազէ՛թ:

Սիրուն, սրիկն տղա. ծխող, շրջմուլիկ տղա,
կանայք կը սիրեն քեզի՝ դիւթւած մանկական նազէդ.
խայթող ու հեզնող տղա. գզանք անարգող տղա,
կանչիր, անցորդին կանչիր. —Տիկին, նոր լուրեր, կազէ՛թ:

Որբիկ, տաս տարնու տղա. ըմբոստ, մաքառնող տղա,
քրտինք կը հոսէ այտէդ, ճակտէդ ու փոշոտ մազէդ.
անկիւն կուչ եկնձ տղա, փողոց քնացոյղ տղա,
կանչիր, քնիդմէջ կանչիր.—Յուրտ է...կըդողամ...կազէ՛թ:



Գիտե՛մ, մեռած չես, դու կապրիս, դու կ'աս
վայելքներու մէջ՝ օտարի գրկին...
բայց գուցէ մի օր յիշես ինձ ու գաս
նոր տենչանքներով՝ սիրելու կրկին:

Բայց պիտի գտնես լուռ, անտիրական
շերիմըս միայն՝ հողին հաւասար.
գուցէ մըմնջես.—Իմ խեղճ սիրական,
ներիր ինձ... որ դու այդ օրին հասար:

Գուցէ արտասուես անկեղծ, սրտագին,
երբ տեսնես արդէն որ ես քներ եմ.
խսկ ես՝ երջանիկ, ցուրտ հողի տակին
անուշ կարտասուեմ ու քեզ կը ներեմ...



Ջերմ սէրի ծարաւ՝
մի որբ եմ մանկութ.
անխ, մի հողմ անգութ
ինձ քշեց տարան:

Ինձ քշեց տարաւ՝
որպէս քօս տերև՝
դէպ ձիւնոտ վերև,
դէպ կիզող հարաւ:

Մի որբ եմ՝ ծարաւ
զգւանքի մի մօր...
կը սգամ իմ օր,
որ հողմը տարան...



Դաշտերէն կանցնիմ լռին,
ուր մեր սիրտ իրար բացինք.
և անան կանաչ ուռին
որու տակ ուրախ լացինք:

Ձինջ լճակ ձորի գրկին,
յորդ գետակ արագ հոսող,
անփոփոխ ու միշտ կրկին
իմ սրտին հէքեաթ լսօսող:

Ամէն ինչ՝ ինչպէս երեկ՝
կենսուրախ, կանաչ, գարուն,
միայն ես գիշեր ցերեկ
կարտասուեմ արցունք-արուն...



Պարտիզի մէջ տխուր հառաչ, վարդասուգ,
հէգ սոխակ մ'եմ, որ կը թափեմ արտասուք.
Թառած թափուր վարդիս թփի ուսերուն,
մահը կերգեմ վարդիս քնքուշ ու սիրուն:

Լաց, սիրտ իմ, լաց, վարդեր չըկան, ալ չըկան.
հողմը քշեց տարաւ քո վարդ-աղջըկան.
ու մնացիր փշերուն հետ մահատու,
անա աշուն, անա փշեր, անա դուն:



ԿԱՊՈՅՏ ԱՂԶԻԿ

1

«Բաժակ թէյ»-ին մէջ երբ ես
կը նստէի՝ նա և եթ
կը մօտենար սեթևեթ,
անմեղունակ ու միշտ հեզ:

— Ի՞նչ կը հաճիք, հաց-կարագ,
բաժակ մը թէյ, գուցէ սո՛ւրճ.
մերթ ժպտանուշ, մերթ ալ լուրջ
կը հարցնէր ինձ արագ:

Կապոյտ աղջիկ էր անուն.
աչեր կապոյտ ու ծաւի,
որ անձանօթ լուռ ցաւի՝
կը յառէր ինձ, ամենուն:

Ծաղկի փնջիկ մ'ալ բուրոտ,
կապոյտ՝ կուրծքին կը ննջէր,
որ պարտէզէն կը փնջէր,
արշալոյսին գուրգուրոտ:

Ինչպէս անփոյթ մի թիթեռ
կը թրվուար, կը խօսէր.
բայց թէ ի՞նչ է խոկ դւ սէր՝
սի, չը գիտէր ինքը դեռ:

«Բաժար թէյ»-ին մէջ՝ նա միշտ
կը մօտենար ինձ արագ.
— Ի՞նչ կը հաճիք, հաց-կարանդ,
կը հարցնէր մեզմ, անվիշտ:

2

Խորանին մէջ իմ հոգուն
զայն դիցունի կերտեցի.
անըջանքով ու խոկուն
Կապոյտ աղջիկն երգեցի:

Կապոյտ էր կեանքն ինձ համար.
կապոյտ էին մարդ, լուսին.
աստղիկներն ալ՝ անհամար
կապոյտ սուտեր ինձ ըսին:

Չը մօտեցա ես իրեն,
չը յայտնեցի ես իմ սէր.
— «Մարդիկը զինք թող սիրեն,
չէ՞ որ հոգին իր իմն էր»...

Միայն օր մը՝ երբ նորէն
ինձ մօտեցաւ քիչ մը սէգ,
թոթովեցի մեղմօրէն.
— Բարև՛, օրիորդ ինչպէ՞ս էք:

Շոյեց ծամերն իր արձակ,
դէպի ինձ դարձուց իւր երես.
ըսաւ անփոյթ, համարձակ.
— Ի՞նձ ծաղիկներ կը բերե՞ս...

«Բաժակ թէյ»-ին մէջ նա միշտ
կը մօտենար ինձ արագ.
— Ի՞նչ կը հաճիք, հաց-կարնո՞ք,
կը հարցնէր մեղմ, անվիշտ:

Իրիկուն մը՝ երբ յոգնած
«բաժակ թէյ» էն ներս մտա,
կապոյտին հոն չգտա,
ո՛ւր էր արդեօք, ո՛ւր գնաց:

Սիրտըս անխօս կաղօտէր
ինչպէս հանգչող մի կանթեղ.
ու հոգիս ալ հէգ, անդեղ
ծունըր չոքած կաղօթէր:

Ա՛խ, այն օրեր մո՛ւթ, դաժան.
ըսի. — Մեռաւ կամ գնաց.
բայց հոգուս մէջ նա մնաց ✓
սրբութեան պէս, անբաժան...

Անցաւ տարին և օրեր՝
անյոյս, անկեանք, սրտմաշուք.
եկան անցան նոր նորեր,
նոյնպէս վհատ սրտմաշուկ:

Իրիկուն մը՝ կարևալէր
սիրտըս յանձնած հին բոցին,
մայթին վրա փողոցին
կը ճեմէի վար ի վեր:

—Տես հմայքներըս քաշող,
օ, հաւատն որ չէ թանգ.
եկո՛ւր, անցորդ, եկ երթանք,—
հնչեց ձայն մը փաղաքշող:

Երբ նայեցա ես նւաղ,
տեսա վշտի մը հանգոյն
կլին մը դողդոջ և անգոյն,—
Կապոյտ աղջիկն էր, աւանդ...



ՅՈՒՍԱԼՔՈՒՄ

Ա՛լ հատաւ իւղը յոյսիս կանթեղին...
անյոյս եմ, մայր:

Աշուն է. շուրջըս ծառեր կան դեղին...
անյոյս եմ, մայր:

Պատրանք ու ցնորք. ինչ որ կար՝ անցաւ...
յոգնած եմ, մայր:

Տիեզերքը ողջ՝ մի մութ քարանձաւ...
օ, քնած եմ, մայր:

Խաբող է եղեր՝ խաբող ամէն կի՛ն...
դերւած եմ, մայր:

Հիմա կը խղճամ մարդուն, ամէնքի՛ն...
էրւած եմ, մայր:

Եւ ինչո՞ւ ժպտիլ, ինչէ՞ն գոհանալ...
բոցլած եմ, մայր:
Աստուած մ'ունէի, սեռաւ, ո՞հ, ան ալ...
խոցլած եմ, մայր:



Շիրվանզադէին

Ժամացոյցը կրկին հնչեց և՛ «հինգ» և՛ «վեց»,
օր մ ալ անցաւ անհետ, դէպի անյայտ թևեց,
ներկան անցեալ դարցաւ, անի, որքան քիչ տևեց.
Ժամացոյցը կրկին հնչեց և՛ հինգ, և՛ վեց:

Մանուկներ ենք, անգէտ՝ ժամացոյցի հինչին,
միշտ կը նայենք վաղևան ու կսպասենք, — ինչի՞ն.
ու կըսպասենք, աւանդ, մինչև օրը Նինջին,
մանուկներ ենք, անգէտ՝ ժամացոյցի հինչին:

Կուգան կերթան ժամեր, կուգան կերթան օրեր,
ու մենք կերթանք լցնել հողի անկուշտ հորեր.
մենք հներըս կերթանք, կուգան կրկին նորեր,
կուգան կերթան ժամեր, կուգան կերթան օրեր:

Ժամանակը սիշտ կ'ս, ժամացոյցը՝ մեկին,
միշտ կը հնչէ «հինգ», «վեց» լոյսին, մութին, մէգին,
մեռնողը լոկ մենք ենք, գերի՝ անյայտ Մէկին,
ժամանակը միշտ կ'ս, ժամացոյցը՝ մեկին...



Կակաչներով, կարկաչներով մայրա էր.
կը ճեմէինք անտառին մէջ միասին.
Գլուխն աղւոր մեղմիկ դրած իմ ուսին,
աւանջս ի վար կը շշնջէր.— Կեանք ու սէր...

Մինչ թե-թեի կը քալէինք մենք արբած,
վերհիւսելով վարդ անուրջներ դալիքին,
յանկարծ տեսանք գերեզման մը նորաբաց,
կուրծքը տւած զեփիւռի նուրբ ալիքին:

Ձով զեփիւռի եղերերգէն, մեզ նման
նոճիներն ալ սարսուացին, դողացին,
և ըսին ինձ.— Ո՛վ տարաբանիսդ հողածին,
քեզ համար ալ կը փորեն խոր գերեզման...

Ես սիրունուս ջերմ գրկեցի ու լացի,
— «Մեռնի՛ր, ինչո՞ւ»՝ մրմնջեցի կարկամած.
գերեզմանէն ձայն մը ըսաւ ինձ կամաց.

— Դէմքըդ՝ տժգոյն, սիրտըդ արդէն կը դողա,
դու կը մեռնիս, մեռնիս պիտի, հէգ տղա.
և սիրունիդ հագած կարմիր ու կապոյտ,
նոր սիրածին գրկած՝ ժպտով կանացի,
շնջելով գողարիկ խօսքեր և անփոյթ՝
օր մի, գուցէ, գերեզմանիդ գա այցի...



Վարդին ըսի.— Ինձ քոյր դարցիր,
դու սէր բուրոյ մի վարդ ես...
Վարդը ըսաւ.— Հեռո՛ւ, անցի՛ր,
դու սիրազուրկ մի մարդ ես...

Աստղին ըսի.— Սիրտըս խանձիր,
դու ջինջ երկնի մի զարդ ես...
Աստղը ըսաւ.— Հեռո՛ւ, անցի՛ր,
դու հողածին մի մարդ ես...

Ծովուն ըսի.— Տար ինձ անձիր
հեռուն, դու յորդ ու հարթ ես...
Ծովը ըսաւ.— Հեռո՛ւ, անցի՛ր,
դու հէգ, մեռնող մի մարդ ես...



Եթէ աստուած մ'ես դու՝ արդարադատ, հսկա,
հառաչանքըս լսիր, տառապանքըս ըզգա՛...
Եթէ աստուած մ'ես դու՝ արդարադատ հսկա:

Ինչո՞ւ տւիր ինձ սիրտ՝ յաւերժասէր, թևող,
երբ սէրը լոկ կիրք էր՝ մի աղընթարթ տևող...
Ինչո՞ւ տւիր ինձ սիրտ՝ յաւերժասէր, թևող:

Ինչո՞ւ տւիր ինձ տեսք՝ կերպարանքիդ հանդոյն,
նոյնպէս մարդկանց բոլոր՝ ստորաքարշ, անզոյն...
Ինչո՞ւ տւիր ինձ տեսք կերպարանքիդ հանգոյն:

Ինձ կարգեցիր իշխան երկրի ամէն շնչին,
չէ որ մահւանն եմ ես, էս հողածին շնչին...
Ինձ կանգնեցիր իշխան երկրի ամէն շնչին:

Ինչի՞ս է պէտք, ինչի՞ս՝ մարդկային միտք, հանճար,
երբ մութի մէջ կուլամ, կը խարխափեմ անճար...
Ինչի՞ս է պէտք, ինչի՞ս՝ մարդկային միտք, հանճար:

Մի հիւլէ եմ անշունչ և ինձ կատեմ արդէն,
կը խորշիմ ես կեանքէն, կը խորշիմ ես մարդէն...
մի հիւլէ եմ անշունչ և ինձ կատեմ արդէն:

Օ՛, կամաչեմ հիմա, չէ՞ որ մարդ եմ, դահիճ,
որ աստուած մ'եմքեզ պէս՝ ընկած աղտի ճահիճ...
Օ, կամաչեմ հիմա, չէ՞ որ մարդ եմ, դահիճ:

Ի՞նչ որ տւիր՝ վերցնւր, ինձմէ էտ առ նորէն,
ես չեմ ուզեր սողալ, ոչ ալ լինել Որէնն...
Ինչ որ տւիր՝ վերցնւր, ինձմէ էտ առ նորէն:

Եթէ աստուած մ'ես դու՝ արդարադատ, հսկա,
հառաչանքըս լսիր, տառապանքըս ըզգան...
Եթէ աստուած մ'ես դու՝ արդարադատ, հսկա:



Եւ հողուդ մէջ դեռ նորաբաց ու տհաս՝
անխ, սեռցուցին երկինք մը ջինջ և անծիր...
բայց ոչ ոքի մի նզովեր, հէգ տղաս,
միայն ներքը, միայն ներքը և անցիր:

Եղբայրներ են մարդ, բորենին և իժեր՝
թունոտ և խեղճ՝ հողաշխարհին մէջ ցան-ցիր...
բնութիւնը մարդուն թշւառ է վիժեր,
զթան մարդուն, միայն զթան և անցիր:

Մի մօտենար, բայց բարև տո՛ւր, բարև ան,
հեզ ժպիտով մարդուն խանձիր ու սանձիր...
անխօս զնան դէպ մենութիւնն արևառ,
ճամբուդ վերայ զթան, ներքը և անցիր:



Միրաբըս կուլան, սիրաբըս անբոյր՝
որպէս խոցւած եղնիկ լեռան.
հազիւ ծլած՝ անխօս մեռան

սէրն ու համբոյր,
սէրն ու համբոյր:

Միրաբըս կուլան, կուլան մոլոր,
օր ու արեւ չունի մանկութ.
քշեց տարաւ մի հողմ անգութ

ծաղկո՞ւնք բոլոր,
ծաղկո՞ւնք բոլոր:

Յուրտ ու ձմեռ: Քուլան, քուլան
սրտիս վերա կը մաղէ ձիւն.
լոկ կը լսւի մի մեղմ հծծիւն,—

սիրաբըս կուլան
սիրաբըս կուլան...

Գինի բեր ըմպեմ, մայր, հաշիշ գնա բեր,
թող ինձ պարուրէ, մայր, թըմբիր քնաբեր:

Գարունս անցաւ, անի, հին երթ է, հին չո՛ւ...
երագե՛լ, սիրե՛լ, ի՛նչ, և ինչպէ՛ս, ինչո՞ւ...

Ձմեռ է հողիս, ձիւն, կը մաղէ նոր ձիւն...
հողուս մէջը կա մեղմ ու վհատ հծծիւն...

Գինի բեր ըմպեմ, մայր, հաշիշ գնա բեր,
թող ինձ պարուրէ, մայր, թըմբիր քնաբեր:

Ինչո՞ւ կը հնչեն միշտ ժամերն անգիտակ...
մի կըծող որդ կա հոս,— իմ թոյլ գանկի տակ...

Ձեմ կընար համբել ան ժամերն ու տարին...
խորթ եմ ես հիմա, խո՛րթ, ծանօթ— օտարին...

Գինի բեր ըմպեմ, մայր, հաշիշ գնա բեր,
թող ինձ պարուրէ, մայր, թըմբիր քնաբեր:

Ինձ զուր կը գգւես, զո՛ւր, տխրագին կոծով...
ի զո՛ւր կարտասուեն, զո՛ւր, աչերը քո ծով...

Արևը անմահ, դո՛ւրս, ինձի կը կանչէ...
ափսոս, հող եմ ես, մայր, ալ որդիդ ան չէ...

Գինի բեր ըմպեմ, մայր, հաշիշ գնա բեր,
թող ինձ պարուրէ, մայր, թըմբիր քնաբեր:



Կուզես փոթորկւիր, կուզես գազազիր,
կնոջ գրկի մէջ լոկ թոյն կա գազիր...
սիրտ, կուզես մեռիր, կուզես գազազիր:

Ոչ ոք չունեցար որ քեզ յոյս մը տար,
զուր կնոջ հոգու ներսերը մըտար...
սիրտ, ոչինչ չկար որ քեզ յոյս մը տար:

Եւ երազեցիր հոգեկան մի սէր.
բայց սէրը կնոջ պատրանք ու միս էր...
սիրտ, չկա՛, չկա՛ հոգեկան մի սէր:

Կուզես փոթորկւիր, կուզես գազազիր,
կնոջ գրկի մէջ լոկ թոյն կա գազիր...
սիրտ, կուզես մեռիր, կուզես գազազիր:



Մայր, տառապանքիս ժամերն են յետին.
 ահա երկնքի հուր-կաթսան եռաց,
 երբ արփի—շողեր ողողեն գետին,
 մայր, պիտի գտնես հէզ որդուդ մեռած:

Կեցեր ես տխուր սնարիս վերև,
 ճակատըս շոյող քու ձեռքն է միթէ.
 խամրած եմ որպէս աշնան չոր տերև,
 վերջին ժամերս են, մայր, որդուդ դիտէ:

Արցունք կը կաթէ աչերէդ խոկուն,
 կերգես մանկութեանս օրը՞րգը յուշիկ.
 երգէ, ան, երգէ որ մտնեմ խոր քուն,
 երգէ որ քնեմ խոր, մշիկ-մշիկ:

Մայր, ծնար, ծնար, բայց ինչո՞ւ ծնար,
 չէ՞ որ հեգնեցին ինձ արև, լուսին...
 օրրոցէն մինչև մահազուժ սնար
 միթէ վայրկեան մ'էր վշտաբեկ ու սին:

Դէհ, մնաս բարո՞ւ, յողնած եմ, անո՞ւժ.
 մահ-գալուկն իջաւ երեսիս մարմար.
 գոցէ աչքերըս համբոյրովդ անուշ,
 և լաց, մայր... միայն սուրբ Մեղքիդ համար:



I

Քոյր, լոյսը հանգցուր, թող լինի գիշեր...
և լուռ կաց, ոչինչ, ոչինչ սի՛ յիշեր...

II

Ահա խցիկիս դռնէն նեղ ու հին՝
ներս մտաւ մահւան պչրող գեղուհին.
և աչերն իր հուր, տարփով կնային,
հոգուս երգիկէն ներսեր կը նային.
վէս շարժումներու տիրական խանդով,
կարծես կը գերէ էութիւնս անթով...

Եկմը, մօտ եկուր, ահա ես հոս եմ,
մահձիս մօտեցիր որ հետըդ խօսեմ.
Ժանօթ ես ինձի, ծանօթ եմ ես քեզ,

վաղուց է որ դուն կեանքիս կը հսկես...
ու ծնւած օրէս, ամեն մի քայլիս
միշտ դէմս ես կեցեր ու միշտ կը փայլիս:
Դուն ինձ թշնասի, դուն ինձ մտերիմ,
դու կեանք իմ, մահ իմ, իշխան իմ, տէր իմ.
անուժ եմ հիմա, յոգնած ու վտար,
յաղթողը դուն ես, եկմը, ինձ գտար:
Առաջւանը չեմ, անիս ես ան ան չեմ,
քոնն եմ ես հիմա ու քեզ կը կանչեմ.
Դու հազար անգամ անպարտ ես մարդէն,
գրկէ՛ ինձ, աղւոր, պատրաստ եմ արդէն...

Ժպտանքով գգուող, աչերով քո ջինջ՝
ժ, մի խոստանար ինձ ոչինչ, ոչինչ.
նչ անմահութիւն, նչ փառք, նչ նոր օր,

նչ արքայութիւն, նչ խինդ, նչ օրօր,
նչ վարձքը վշտիս, նչ ծիծաղ-ափեր,
մի հեզներ, ժ, նչ, և ինձ մի խարեր:
Սմեն ինչ սուտ է, ամեն ինչ խոստում,
կեանքէն գէպի մահ՝ մի թեթե ստում,
և մահէն անդին՝ մոռացում, պարնալ.
անխ, մարմնիս վերայ որդերու տարափ
ու ոսկորներս՝ փոշի հովատար:
Ի՞նչ, երկի՞նք, Սսուամծ, չէ՛ շեմ հաւատար...
խակ եթէ լինէր, ինձ իր մօտ կանչէր,
երեսն ինձ ցոյց տալ պիտի ամաչէր
և իմ հառաչէն, իմ նզովք անէն
պիտի վար վիժէր իր ոսկի գահէն...
չէ՛, շեմ հաւատար... ահա կը գոչեմ,

ես վախեցող չեմ, ես վախեցող չեմ
նչ դժոխքներէն, նչ նոր պատիժէն.
խոցել կեանքի մէջ մարդէն, վատ իժէն,
լինել մի գերի այս աշխարհ—բանդին
և ըսել որ կայ դժոխք մ'ալ անդին... †

Օ՛, մահ իմ, մահ իմ, ես քեզի մեղան,
քու գէմ խիզախող, պայքարող մ'եղա,
պարտուած եմ հիմա, դալնուկ եմ, վաւր.
յաղթողը դուն ես, եկան ինձ գտան.
մենք՝ իրար ծանօթ, մենք՝ իրար օտար,
գրկէ՛ ինձ, մահ իմ, և տան ինձ, ու տան...

III

Թո՛յր, ահա կերթամ, բայց մի լար վերաս...
կեանքը մի մահ է ու մահը՝ երազ...

Ծիլ ու ծառին
 ու ծիծառին
 ըսէք, որ ես մեռնիմ պիտի.
 զով ձորակին,
 ծով—ծորակին
 ըսէք, որ ես մեռնիմ պիտի.
 դ՛ուք, բոյր ծաղկին,
 ու ծիծառ—կին,
 ձեզի կարօտ մեռնիմ պիտի.
 Ինձ երգ յուշող
 սէր, վէրք ու շոյ
 ձեզի ըսեմ,—մնաք բարո՛վ:

Կարօտ՝ ոսկի,
 անկեղծ խօսքի
 սիրածը ձեր մեռնի՛ պիտի.
 անխ, այս դեղին,
 յոգնած տղին
 ափսոսացէք, մեռնի՛ պիտի.
 սև հող բացէք
 ու ողբացէք,
 արտասուեցէք, մեռնի՛ պիտի.
 սիրտը ոսին
 յանձնէք փոսին.
 վերջին անգամ,—մնաք բարո՛վ:



Ո՛չ ծաղկեփունջ, ո՛չ խնկի ծուխ, ո՛չ արձան.
 ո՛չ աղաչանք, ո՛չ հառաչանք կամ մրմունջ.
 Իմ գերեզման թողէք լքւած և անձայն,
 որ ես քնեմ լուսթեան մէջ համըր, մունջ:

Սիրտըս՝ խոցւած ընկեր-մարդէն, փուշ-վարդէն.
 կեանքի հինչէն, ամէն ինչէն՝ դալկացած...
 մի՛ մօտենաք, թողէք, ա՛յլ ուշ է արդէն,
 մի՛ վրդովէք յուշերըս հին, ա՛յլ դացած:

Իսկ երբ հնչէ յարութեան օր փողը սէգ,
 ձեր բարեգութ Յնովային սհ ըսէք.
 —Այո քերթողի սիրտը, ս՛վ տէր, մի՛ յուզեր,
 գերեզմանէն նա վեր կենալ չի՛ ուզեր...



Կէս գիշերին, անապատէն լայնածիր
 կանցնի յոյսիս կարաւան.
 անեղերքի սուերին մէջ՝ ցան ու ցիր,
 հեռո՛ւն լոյսեր կերեան:

Մեծ լուսթեան գրկին մէջը՝ արծաթէ
 զանգակները կը զընդան.
 լուրթ եթերէն ճամբուս վրա կը ծաթէ
 հէքեաթածին լուսընկան:

Չանդակներու զանչը անուշ, զղզղուն
 կը թրթռա, կը մարէ.
 անէութեան մէջը հողիս է գեղուն
 երկունքներով գոհարէ:

Ու կը քալեմ կարաւանիս զընդոցով
 անապատէն անշուշան
 դէպի հեռուն, անուրջներուս լոյսէ ծով,
 դէպի իմ մայր Ատրուշան...

Կէս գիշերին, անապատէն լայնածիր
 կանցնի յոյսիս կարաւան.
 անեղբրքի սուերին մէջ՝ ցան ու ցիր,
 հեռուն լոյսեր կերևան:



Ց Ա Ն Կ


ԳՈՒՆԱՏ ՍԵՂԵԴԻՆՆԵՐ	ԵՐԵՍ
Նախերգ	5
Դահլիճի մէջ	7
Լուսաբացին	9
Խոցեց, անցաւ	10
Քարսիրտ աղջիկ	11
Տենչանք	13
Վանա գիշեր	15
Ծովու մէջ	18
Մի սօսի	19
Լինէի	20
Մեռնող կարաս	22
Հին յուշեր	24
Չմեռ	26
Հարսանիք	28

Ա՛լ գալու չէ	31
Փոքրիկ լրագրավաճառ	33
Կը ներեմ	35
Որբ	36
Միայն ես	37
Վարդասուղ	38
Կապոյտ աղջիկ	41

ՅՈՒՍԱՔՈՒՄ

Հառաչանք	51
Ժամացոյց	53
Սիրունու հետ	55
Հեզնանք	57
Տրտունջ	58
Ներիր	61
Սիրտս կուլա	62
Մոռացում	63
Սիրտ	65
Մահամերձ	66
Մահերգ	68
Հրժեշտ	72
Չեմ ուզեր	74
Վերջերգ	75





ՀՀ Ազգային գրադարան



NL0368904

57641